խանակ պարգեւի անարգանաց հասուց, որ յայտ է Թիֆլիզեցուց։ Բայց մի միայն կոմսն Երեւանու և կնեազն Վարշաղու իւր բերանօք յոյս ետ ինձ, թէ առանց պարգեւի չես մնալ. ահա պարգեւն այս է, որ մին տարի և կէս է որ չարչարվում եմ առանց մեղաց ի բանտի գոլով։

Ո՞վ Քրիստոսի փոխանորդ Սուրբ Կայսր, քրիստոս աղքատաց համար մարմին էառ որ փրկէ զնոսա, և դուք պատկեր էք նորա պարտ էք ողորմիլ աղքատիս նշանակել զայր, որ վերահասու լինիցի բանից մերոց արդարութեամբ, քանզի դուք եւս համարս տալոց էք Քրիստոս թագաւորին։ Յառաջ քան զայս 4000 մանէթ արարատեայն եկեղեցւոյ պարտքեմ տուել, որ ի ծերութեան ժամանակիս ինձ պահպանէ. իսկ այժմ բանտեն եդեալ զիս. և յօհաննէս պատրիարգն այս թվին. 79 համարաով գրում է ինձ թէ այդ տնմարդաբնակ տեղդ պարտիս մեռանիլ. և թէ ես աստ մեռանիմ յուսահատեալ, արդեօք ինչ շահէ Ձերին սուրբ կայսերութիւնն։ Ունիմ յանձնական 2000 մանէթ պարտք և ինքըս չքաւոր չունիմ օգնական բացի մեծութիւն կայսերութեանդ. եթէ դուք եւս անտես առնէք, պարտիմ իմ բողոքս Քրիստոս թագաւորին հասցնել։

Ամենաողորմ թագաւոր, հաճելով հայեցարուք ի խնդիրս այս և ցուցէք ինձ վաղվաղակի զօգնութիւն Ձեր, զի մի մեռայց ի միջի չարչարանաց. առաւել զի խնդիրք իմ առ բարեկարգութեան եկեղեցուն է, որ է հաճելի Աստուածազօր Կառավարութիւնն Ձերն կայսերական բարձրութեան։

Արքեպիսկոպոս հայոց
ՍԻՄԷՈՆ ԲԶՆՈՒՆԵԱՆՑ

№ 5
ի 1835 թվ. 1 նոյեմբ.
ի վանս Սաղիանու
Որ է Շիրվան

ի 1836 թվ.

Շամախու քանիմի իշխանաց ծաղկեալ թղթով նոր տարոյ շնորհաւորէք գրեցի։ Թիֆլիզեցի աղա Սօսին մեզ համար մէկ գը-